600.0194.05.06.19

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2019 թվականի №194Ա

ք. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն իր 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, իրականացրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2018 թվականի 1-ին եռամսյակում կայացած «Լոտ1- Տաշիր քաղաքի Երևանյան և հարակից փողոցների բաշխիչ ցանցերի վերակառուցում» գործարքի (այսուհետ՝ Գործարք) մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ մատակարարման պայմանագրով սահմանվել է գնման առարկայի դիմաց վճարումն իրականացնել վեց տարվա ընթացքում,

բ) որ 2019 թվականի մայիսի 6-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների (այսուհետ՝ Լրացուցիչ պահանջներ) 6-րդ կետով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության 2019 թվականի մայիսի 14-ի №188-19 գրությամբ ներկայացված պարզաբանումները, համաձայն որոնց՝ մատակարարման պայմանագրով գնման առարկայի դիմաց վճարման վեց

տարի ժամկետ սահմանելու հիմնական պատճառը Գործարքի՝ նախապես ընկերության 2018 թվականի ներդրումային ծրագրում ներառված և ֆինանսավորման աղբյուրների այդ պահին հստակեցված չլինելն է,

դ) Լրացուցիչ պահանջների 6-րդ կետը, համաձայն որի՝ գնումներ կատարելիս ձեռնարկվում են համապատասխան միջոցներ հնարավորինս մեծ թվով մասնակիցներ ներգրավելու համար՝ բացառելով որակավորման այնպիսի չափանիշների ու բնութագրերի, գնումների այնպիսի տեսականու, քանակների ու պատվերների կատարման այնպիսի ժամկետների, վճարման այնպիսի պայմանների սահմանումը, որոնք կրում են խտրական բնույթ, ստեղծում են հակամրցակցային միջավայր կամ սահմանափակում են մրցակցությունը՝ առանց համապատասխան հիմքերի առկայության խոչընդոտելով կամ սահմանափակելով որևէ անձի՝ գնումներին մասնակցելու իրավունքը,

է) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լրացուցիչ պահանջների 6-րդ կետը՝ սահմանելով վճարման երկար ժամկետ, դրանով իսկ սահմանափակելով մրցակցությունը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լրացուցիչ պահանջների 6-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
5 հունիսի 2019թ.